



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՏՈՒԿ ՌԵՍՈՒՑՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ **Դպրոց**) կառավարման խորհուրդը (այսուհետ՝ **Խորհուրդ**)՝ խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ խորհրդի անդամներ՝ Լեռնիկ Հովհաննիսյանի, Արթուր Հովհաննիսյանի, Ռուբեն Մելիքյանի և Լյուդվիկ Դավթյանի կազմով,

մասնակցությամբ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանի, ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 45.4-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրության 13.5-րդ կետի, Խորհրդի՝ 21.03.2019 թվականի թիվ 02/05-1-Լ որոշմամբ հաստատված հատուկ ուսուցում անցնելու ծրագրի 5-րդ կետի պահանջներով,

**ՈՐՈՇԵՑ՝**

- Նոր խմբագրությամբ հաստատել ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի՝ 18.04.2018 թվականի թիվ 03/03-Լ որոշումը՝ համաձայն ստորև նշվածի.

- 1) ՀՀ փաստաբանների պալատի որակավորման քննությունը (առաջին փուլ) չհանձնած կամ որակավորման քննությանն անհարգելի չմասնակցած ունկնդիրների հատուկ ուսուցում անցնելու վճարի չափը սահմանել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
- 2) ՀՀ փաստաբանների պալատի որակավորման քննության երկրորդ փուլը, այդ թվում՝ բաղադրիչի թեման, չհանձնած կամ որակավորման քննությանն անհարգելի չմասնակցած ունկնդիրների հատուկ ուսուցում անցնելու վճարի չափը յուրաքանչյուր բաղադրիչի մասով սահմանել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
- 3) ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի հաստատած և տվյալ ժամանակահատվածում գործող Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի պահանջների խախտմամբ պայմանավորված հատուկ

ուսուցում անցնելու դեպքում՝ վճարի չափը սահմանել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

- 4) Վճարումը կատարվում է հատուկ ուսուցումը սկսելու օրվանից եռօրյա ժամկետում:

Խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

21 մարտի 2019թ.

թիվ 02/05-2-Լ

ք. Երևան